

**ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ
(ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ
ԿԱՐԳԸ**

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«12» 08 2010թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 60210308

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

04 օգոստոսի 2010 թվականի N 51-Ն

**ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը **որոշում է**:

Հաստատել հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը (կցվում է):

Հաստատված է
Հեռուստատեսության և ռադիոյի
ազգային հանձնաժողովի
04.08.2010թ. թիվ 51-Ն որոշմամբ

**ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ)
ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորումը:

2. Լիցենզավորումը իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգի համաձայն:

II. ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒԻ ԴԻՄՈՒՄԸ

1. Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու համար դիմողը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ առձեռն՝ ստացականով, Հանձնաժողովի աշխատակազմի քարտուղարություն ներկայացնում է դիմում (աշխատանքային օրերին, ժամը՝ 10⁰⁰–ից մինչև 17⁰⁰–ն), որում նշվում են՝

- 1) դիմումատուի անվանումը և գտնվելու վայրը.
- 2) հեռուստառադիոձրագրերի թեմատիկ ուղղվածությունը.
- 3) սփռման տարածքը.

4) տեղեկություններ դիմումատուի՝ այլ հեռուստառադիոընկերությունների հիմնադիր և լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությամբ և տարածմամբ զբաղվելու մասին.

5) վերահեռարձակվող հեռուստառադիոձրագրերի թիվը (եթե դիմումատուն նախատեսում է իրականացնել վերահեռարձակում).

6) իր կողմից շահագործվող կաբելային (մալուխային) ցանցով այլ հեռահաղորդակցական ծառայություններ մատուցելու մասին տեղեկություններ.

7) դիմումի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:

2. Դիմումին կից ներկայացվում են դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները, բիզնես ծրագիրը, տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին, ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին, տեղեկանք՝ դիմումում նշված սփռման տարածքում բնակարանների թվի մասին:

3. Դիմումին կից ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը դրանք ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դիմողին պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին՝ դրանց շտկման նպատակով: Դիմողն իրավունք ունի նշված ծանուցումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Հանձնաժողովին ներկայացնել փաստաթղթերը՝ առանց սույն մասում նշված թերությունների:

III. ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱԲԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

1. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը Հանձնաժողովի աշխատակազմում ուսումնասիրվում են դրանք մուտքագրելուց հետո՝ 45 օրվա ընթացքում:

Աշխատակազմը ուսումնասիրման արդյունքների մասին Հանձնաժողովին ներկայացնում է գրավոր առաջարկություն:

2. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա տալու համար Հանձնաժողովն իր նիստում քննարկում է դիմումը և որոշում է ընդունում այն մուտքագրելուց հետո՝ 60 օրվա ընթացքում:

3. Լիցենզիա տալու մասին որոշմամբ Հանձնաժողովը սահմանում է նաև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված այն հեռուստաընկերությունների հեռուստառադիոծրագրերը (բացառությամբ վերահեռարձակող հեռուստաընկերությունների), որոնք ենթակա են պարտադիր հեռարձակման հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից (սույն կետը ուժի մեջ է մտնում 2015թ. հունվարի 1-ից):

4. Լիցենզիա չի տրվում, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են, կամ չեն համապատասխանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին, և սույն կարգի 2-րդ գլխի 3-րդ մասին համապատասխան՝ դիմողը չի վերացրել Հանձնաժողովի նշած թերությունները.

2) դիմողը, օրենքի համաձայն, իրավունք չունի զբաղվելու հեռուստառադիոծրագրերի հեռարձակմամբ.

3) բացակայում են հեռուստառադիոծրագրերի հեռարձակման տեխնիկական հնարավորությունները:

5. Լիցենզիա տալը մերժելու հիմքերի մասին դիմողին գրավոր տեղեկացնում են որոշման ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Լիցենզավորման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով: